

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏՓՈՒՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ**  
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԴԵՆԻՇՆԵՐԸ	214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

**Բանալի բառեր.** թուրքիզմ, պանթուրքիզմ, թյուրքականություն, հայ պատմագիտական միտք, քաղաքական հայագիտություն, թուրքալեզու ժողովուրդներ, գյոքալիյան ընկալում, ազգային գաղափարախոսություն:

Թյուրքականության (Türkçülük) գաղափարախոսության և քաղաքական ու մշակութային ասպարեզներում կենսագործման հիմնահարցերը տասնամյակներ շարունակ եղել են թուրք<sup>1</sup>, արևմտյան, Ռուսաստանի կայսրության, խորհրդային և հետխորհրդային Ռուսաստանի, ինչպես նաև ԽՍՀՄ այլ հանրապետություններ ներկայացնող<sup>2</sup> և, իհարկե, հայ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ստեղծվել է գիտական, գիտահանրամատչելի ու մեթոդական, հիրավի, հսկայածավալ գրականություն<sup>3</sup>: Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել հայաստանյան գիտնականների՝ թյուրքականությանը և դրա ամենաակնառկա գաղափարախոս Զիյա Գյոքալիին անդրադարձների պատկերն ամբողջացնող ուշագրավ դրվագներ:

Հայ պատմագիտական ու հասարակական միտքը ծանոթ էր Զ. Գյոքալիի «Թյուրքականության հիմունքներին» նախևառաջ և առավելապես Զարևանդի՝ «թարմ հետքերով» գրված ու հրատարակված «Ինչ կծրագրեն թուրքերը - Միացյալ և անկախ Թուրանիա» գրքի շնորհիվ: Այն թարգմանաբար տպագրվել է ռուսերեն (1930 թ.), անգլերեն (1971 թ.), իսկ 1993 թ. հայերեն վերահրատարակվել է նաև Երևանում<sup>4</sup>: Հայ պատմաբանները և հրապարակախոսները հետագայում Զ. Գյոքալիի գործունեությանն անդրադարձել են բազմիցս, հատկապես Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման, ինչպես նաև թուրք ազգային գաղափարախոսության հիմնահարցերի ուսումնասիրության տեսանկյուններից: Մեր պատմաբանները, անշուշտ, ծանոթ էին նաև դեռևս 1928 թ. հրապարակ իջած Շահան Նաթալիի (Հակոբ Տեր-Հակոբյանի) «Թուրքիզմը Անգորայեն Բագու և թրքական օրինթասիոն» և «Թուրքերը և մենք» աշխատություններին<sup>5</sup>, որտեղ քննվում էին թյուրքականության գաղափարախոսության կոնկրետ դրսևորումներն ու հայ քաղաքական մտքի որդեգրած մարտավարությունը, կային կոնկրետ անդրադարձներ Իսմաիլ Գասպրինսկուն, Զ. Գյոքալիին, Յուսուֆ Աքչուրային, Մեհմեթ Ֆուաթ Քյոլիյուլուին և պանթուրքիստ այլ գործիչների:

1982 թ. լույս տեսան պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրության առաջին, իսկ 1983 թ.՝ երկրորդ հատորները: Այս կոթողային ուսումնասիրությունը, որը քաղաքական հայագիտության ակունքներում կանգնած վաստակաշատ պատմաբանի, դիվանագետի ու պետական գործչի գիտական գործունեության պատկերն է, հետագայում տպագրվել է ռուսերեն<sup>6</sup>, թարգմանվել բուլղարերեն և անգլերեն<sup>7</sup>:

\* Հոդվածը ներկայացվել է 15.11.2019 թ., գրախոսվել է 12.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս "Modern Türkiye'de Siyasi Düşünce". Cilt 4. Milliyetçilik. İletişim Yayınları 848, İstanbul, 2002, ss. 947-969, Սաֆարյան Ա., Թուրքական գյոքալիագիտության պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (647), մայիս-օգոստոս, Ե., 2016, էջ 86-93:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Սաֆարյան Ա., Խորհրդային արևելագետները՝ Զիյա Գյոքալիի մասին, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 11-րդ հատոր, Ե., 2016, էջ 512-526:

<sup>3</sup> Տե՛ս Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալիը և «Թյուրքականության հիմունքները», Ե., 2012, էջ 7-50, 253-296:

<sup>4</sup> Տե՛ս Զարևանդ, Միացյալ և անկախ Թուրանիա, Ե., 1993:

<sup>5</sup> Տե՛ս Նաթալի Շ., Թուրքերը և մենք, Աթենք, 1928, Բ հրատ., Աթենք, 1931, Գ հրատ., Ե., 1992, Ե հրատ., Ե., 2011, Ե հրատ.: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին վաստակաշատ պատմաբան, պրոֆ. Պետրոս Հովհաննիսյանի առաջաբանով լույս է տեսել նաև «Թուրքերը և մենք» ժողովածուն, որն ընդգրկում է Շահան Նաթալիի՝ տարբեր տարիների այն ուսումնասիրությունները, որոնք աղերսվում են XX դարասկզբի հայոց պատմության ամենաողբերգական իրադարձություններին, թուրքիզմի գաղափարախոսության կոնկրետ դրսևորման ձևերին (խմբ.՝ Պ. Հովհաննիսյան, Կ. Վարդանյան, ԳԱԹ, Ե., 2015):

<sup>6</sup> 1986 և 1989 թվականներին, վերջաբանը՝ Ա. Զ. Կիրակոսյանի:

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Մելիքյան Գ. Վ., Սաֆարյան Ա. Վ., Պրոֆեսոր Զոն Կիրակոսյանի գիտամանկավարժական գործունեությունը (համառոտ ակնարկ), Զոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (խմբ.՝ Ա. Զ. Կիրակոսյան), Ե., 2009, էջ 558-561:



Ունենալով զուտ ակադեմիական բնույթ և հրատարակվելով տասնյակ հազարավոր տպաքանակներով՝ այս բացառիկ արժեքավոր ուսումնասիրությունը դեռևս խորհրդային տարիներին դարձել է ահռելի լսարանի սեփականություն, այսօր էլ քաջածանոթ է թե՛ մասնագիտական հանրությանը, թե՛ ընթերցասեր լայն հասարակայնությանը<sup>1</sup>: Սույն հոդվածում անդրադարձ ենք կատարել Ջ. Կիրակոսյանի՝ նվազ հայտնի գրախոսություններից երկուսին, որոնք, առանց դույզն իսկ չափազանցության, գիտականության, հրապարակախոսական պաթոսի և իմաստուն հայրենասիրության «համակեցության» վառ օրինակներ են:

Գրախոսելով<sup>2</sup> ադրբեջանցի ճանաչված հետազոտող Էսմերալդա Հասանովայի՝ ժամանակին հասարակական-քաղաքական մեծ հնչեղություն ստացած ու խորհրդային թուրքագետներին և օսմանագետներին հետազայում քաջածանոթ «Բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոսությունը Թուրքիայում երիտթուրքերի շրջանում (1908-1914 թթ.)»<sup>3</sup> մենագրությունը՝ Ջ. Կիրակոսյանը նշում էր, որ Է. Հասանովան, «հակադրելով պանթուրքիզմը թուրքիզմին», ընկնում է ծայրահեղության մեջ՝ կարծելով, որ մեկը մյուսի հակաթեզն է, չժխտելու փաստով իսկ շղարշում է այն ճշմարտությունը, որ «թուրքիզմը և պանթուրքիզմը» հանդես են եկել և հանդես են գալիս օրգանական սերտ կապի մեջ, բխում են մեկը մյուսից, պայմանավորված են մեկը մյուսով և գեթ պատմական հանգամանքների բերումով են ի հայտ գալիս տարբեր ձևերով<sup>4</sup>: Այնուհետև գրախոսը փաստում է այն իրողությունը, որ մի կողմից մենագրության մեջ օգտագործված նյութերը ապացուցում են «պանթուրքիզմի և թուրքիզմի» միասնականությունը-փոխպայմանավորվածությունը, բայց մյուս կողմից Է. Հասանովան չի բացահայտում թուրքական մեծապետական նացիոնալիզմի և երիտթուրքերի կեղեքվող ազգային փոքրամասնությունների հանդեպ վարած հրեշավոր քաղաքականության հետադիմական բնույթը, մինչդեռ «թուրքական բուրժուական նացիոնալիզմի առաջնորդները, ձգտելով պահպանել դեսպոտիկ թուրքական կայսրությունը, հանդես էին գալիս ոչ թե իբրև շահագործվող ազգի առաջադիմական նացիոնալիզմի ներկայացուցիչներ, այլ որպես մարտնչող մեծապետական նացիոնալիստներ», և հենց սա են ապացուցում գրքում հետազայում բարձրացված հարցերը, հեղինակի մեջբերումները...: Ջ. Կիրակոսյանը, համաձայնելով Է. Հասանովայի այն գնահատականին, որ Ահմեդ Հիքմեթը, Հալիդե Էդիպը, Ջ. Գյոքալփը հանդես էին գալիս թուրքական «շովինիզմի» դիրքերից, հիմնավորում ծավալապաշտական քաղաքականությունը, միաժամանակ հերքում է գրախոսվող մենագրության հեղինակի պնդումն այն մասին, թե իբր պանթուրքիստների մեջ կային նաև անկեղծ մոլորյալներ»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Киракосян Дж., О книге Э. Ю. Гасановой “Идеология буржуазного национализма в Турции период младотурок (1908-1914)”, «Բանբեր երևանի համալսարանի», 1967, II 3, с. 253-257: Գրախոսությունը արտատպվել է Արման Կիրակոսյանի աշխատասիրությամբ հրատարակված «Ջ. Կիրակոսյան, Ընտրանի, Ե., 2014» գրքում (էջ 115-121):

<sup>3</sup> Гасанова Э. Ю., Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914 гг.), Баку, 1966, с. 6. Այս մենագրությանը վերաբերյալ անդրադարձները տե՛ս Սաֆարյան Ա., Ջիյա Գյոքալփը և «Թուրքականության հիմունքները», Ե., 2012, էջ 27, 145, 157, 185:

<sup>4</sup> Տե՛ս Կիրակոսյան Ջ., Ընտրանի, էջ 118: Ակնհայտ է, որ Ջ. Գյոքալփը «Թուրքականության հիմունքներում» թուրքիզմը (Türkiyecilik), օղուզականությունը կամ թուրքմենականությունը, այսինքն՝ ժամանակակից թուրքերի, ադրբեջանցիների և թուրքմենների միասնականության ջատագովությունը (Oğuzculuk yahut Türkmencilik) ու թուրանականությունը (Turancılık) դիտարկում է որպես համաթուրքականության կամ պանթուրքիզմի միասնական գաղափարախոսության՝ մեկմեկու շաղկապված ծրագրային փուլեր: Տե՛ս և հմմտ. Gökalp Z., Türkçülüşün Esasları, Dördüncü Basılış, Varlık Yayınevi, sayı: 825, İstanbul, 1961, ss. 17-21.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում: Այնուհետև Ջ. Կիրակոսյանը մեջբերում է խորհրդային պատմաբան Օ. Գիգինեիշվիլու ձևակերպումը. «Ջիյա Գյոքալփի պանթուրքիստական ուսմունքը դիտում էր Թուրքիայում ապրող բոլոր ոչ թուրքերին, անկախ նրանց քրիստոնյա կամ մուսուլման լինելուց, որպես թուրքերի թշնամիներ, պահանջում էր Թուրքիան վերածել լեռնկապես զուտ թուրքական կայսրության»: Гигинейшвили О., Из истории экспансионистской политики младотурок (авторферат), Тбилиси, 1954, с. 10, տե՛ս նաև Կիրակոսյան Ջ., Ընտրանի, էջ 119: Ուշագրավ է նաև, որ արդեն 1984 թ. տպագրված «Պանթուրքիզմի ազդեցիվ դոկտրինան երեկ և այսօր» հույժ արժեքավոր հոդվածում Ջ. Կիրակոսյանը, անդրադառնալով Է. Հասանովայի տեսակետների հետազայ էվոյուցիային ու կոնկրետ հրապարակումներից մեկին, արձանագրել է. «Սովետական Ադրբեջանի անվանի թուրքագետ Է. Հասանովան գտնում է, որ **գաղափարապես ֆաշիզմին ամենամոտ կանգնած են եղել պանթուրքիստները** (ընդգծումը հեղինակներինն է), որ նրանց միավորում են ռասիզմը, շովինիզմը,

Գիտական ուրույն «Ժանրի» բացառիկ օրինակ էր նաև համահեղինակներ Զ. Կիրակոսյանի և Ա. Միմոնյանի համեմատաբար սեղմ, բայց հիրավի ջախջախիչ գրախոսությունը՝ Համիդ Զեյնալաբդին-օղլի Ալիևի՝ նախկին ԽՍՀՄ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ինստիտուտի կողմից հրատարակված ծավալուն ու խիստ վիճահարույց մենագրության վերաբերյալ, որում փորձ էր արվում ներկայացնելու 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը, երիտթուրքերի կառավարության ներքին քաղաքականությունը, Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության մասնակցության, այդ պատերազմի՝ թուրքական տնտեսության վրա գործած ազդեցության, ռազմական գործողությունների ընթացքի, Կովկասում թուրքական ինտերվենցիայի, երիտթուրքական արտաքին և ներքին քաղաքականության կործանարար հետևանքների հիմնահարցերը<sup>1</sup>: Գրախոսները, արձանագրելով համապատասխան նյութի հավաքման և համակարգման միջոցով մենագրության մեջ երիտթուրքական վարչակարգի գեթ ընդհանուր պատկերի արտացոլման իրողությունը<sup>2</sup>, մատնացույց էին անում հեղինակի՝ Գ. Ալիևի, ոչ քննական, երբեմն «անհասկանալի» վերաբերմունքը օգտագործված գրականության (մասնավորապես Թալեաթի և Զեմալի հուշերի, պատմական փաստերը խեղաթյուրող թուրք հեղինակների, մարտնչող թրքասիրությամբ հայտնի Արմինիուս Վամբերիի հրապարակումների) հանդեպ: Գրախոսները կտրականապես հերքում էին մենագրության հեղինակի՝ ամբողջ ոչ թուրքական բուրժուազիան «օտարերկրյա կապիտալի ագենտուրա» դիտարկելու և Օսմանյան կայսրության «ծաղկուն ներքին շուկայի» մասին պնդումները<sup>3</sup>:

Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության գաղափարական հոսանքների (պանիսլամիզմի, օսմանիզմի, պանթուրքիզմի և թուրքիզմի) ու հարակից հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում են ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրությունները, ինչպես նաև «Ազատագրական պայքարի ուղիներում» հնգհատորյա կոթողային աշխատությունը, որոնք կարևոր ներդրում են հայ պատմագրության մեջ<sup>4</sup>: Մասնավորապես «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» գրքում հեղինակը, ըստ էության, բացահայտելով խորհրդային «կենտրոնում» հրատարակված պատմագիտական ու թուրքագիտական գրականության մեջ պանթուրքիզմի և թուրքիզմի իրական կապի հետևողական սքողման փաստը և քննադատելով պանթուրքիզմի

---

հակասությունը»: Տե՛ս և հմմտ. Գасанова Э., Антикоммунизм В Турции, “Национально-освободительное движение и современная идеологическая борьба”, Баку, 1973, с. 102; Զ. Կիրակոսյան, Ընտրանի, էջ 556:

<sup>1</sup> Տե՛ս Կиракосян Дж. С., Симонян А. П., “Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, 388 с.” (գրախոսություն), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, N 6., էջ 107-111: Նույնը տե՛ս Կիրակոսյան Զ., Ընտրանի, էջ 186-193:

<sup>2</sup> Հարկ է նշել, որ չնայած գրախոսվող մենագրությունում տեղ գտած բազում վիճելի ձևակերպումների և հետևություններին՝ այս գրքում արձանագրված են իրողություններ, որոնք այսօր երբեմն անհավանական ցինիզմով վիճարկվում են ադրբեջանական որոշ «գիտնականների» կողմից: Մասնավորապես հեղինակն արձանագրում է այն փաստը, որ թեև Օսմանյան կայսրությունում «տեղահանության» մասին օրենքը ձևականորեն նախատեսում էր բնակչության «էվակուացիան» այն շրջաններից, որոնց «սպառնում էր ռուսական բանակը», սակայն իրականում այն կիրառվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այդ թվում, օրինակ, Սեբաստիայի նահանգում, որը հեռու էր ռուս-թուրքական սահմանից, այլև Կենտրոնական Անատոլիայում ու Ստամբուլում բնակվող հայերի դեմ, և «հարազատ վայրերից աքսորված 1.5 միլիոն հայերի համար «տեղահանության» մասին օրենքը նշանակում էր զանգվածային ոչնչացում»: Տե՛ս Աлиев Г. З., указ соч., с. 277. Այնուհետև հեղինակը գրել է. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացվել է միլիոնից ավելի հայ: Ողջ մնացածները փրկվել են միմիայն արտասահման փախչելու շնորհիվ»: Տե՛ս նույն տեղում, էջ 278: Ակնհայտ է, որ ադրբեջանական խորհրդային հանրագիտարանը նույնպես ներկայացրել է Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կառավարության՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության քաղաքականության՝ զանգվածային ջարդերի, ավելի քան 1.5 միլիոն հայերի ոչնչացման, 600 հազար հայերի՝ Միջագետքի անապատները քշվելու ու նրանց մեծ մասի զոհվելու, 300 հազար հայերի՝ Ռուսաստանում օթևան գտնելու, փախստականների մի մասի՝ Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ապաստանելու փաստերը: Տե՛ս և հմմտ. նաև “Азербайжан совет энциклопедиясы”, чилд 4, Баки, 1980, с. 84:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 190, հմմտ. Աлиев Г., указ соч., с. 15.

<sup>4</sup> Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986; նույնի «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Ե., 1991; նույնի «Ազատագրական պայքարի ուղիներում», հ. I-V, Ե., 2003, 2009, 2010, 2013:



նկատմամբ միանշանակ մերժողական, բայց թուրքիզմի նկատմամբ «ներողամիտ», երբեմն էլ «քաջալերական» վերաբերմունքի դրսևորումները, իրավացիորեն ընդգծում էր. «Թուրքիզմի բոլոր նշանավոր գաղափարախոսները տրամաբանության բերումով դարձան նաև պանթուրքական գործիչներ... թուրքիզմը, կազմելով պանթուրքիզմի միջուկը, վերջին հաշվով սրա հետ մի ամբողջություն է կազմում: Պանթուրքիզմը բարձրանում է թուրքիզմի ուսերին, կամ կարելի է ասել՝ վերջինս վերածվում է պանթուրքիզմի: Եթե թուրքիզմն Օսմանյան կայսրությունը, հատկապես «բուն Թուրքիան» ազգային տեսակետից «միատարր» դարձնելու ծրագիր էր, ապա պանթուրքիզմը գերաճում է թուրքիզմից, ընդլայնում գործունեության դաշտը, տարածվում Թուրքիայի սահմաններից դուրս՝ իր ոլորտի մեջ ամենելով ուրիշ երկրներ ու ժողովուրդներ»<sup>1</sup>:

Քննելով պանթուրքիզմի մարդատյաց գաղափարախոսության փիլիսոփայական հենքի խնդիրը՝ Հ. Սիմոնյանը իրավացիորեն ընդգծում էր երիտթուրքական պարագլուխների հայացքների օրգանական կապը պոզիտիվիզմի հիմնադիր Օ. Կոնտի «Մեծ էակի» և Ֆ. Նիցշեի «Գերմարդու» գաղափարների հետ: «Թուրքական ռասան մաքրելը գլխավոր նպատակներից մեկը համարելով, -գրում է Հ. Սիմոնյանը, -երիտթուրքերը դրան հասնելու միջոցներ էին առաջադրում պատերազմներն ու ջարդերը, Օսմանյան կայսրության այլազգի արհամարիելի ռասայի թրքացումը կամ նրա գլխովին ոչնչացումը: Այդ «գերագույն խնդրի» իրականացումը համարում էր «մեծ անհատների» գործ: Պատահական չէ, որ երիտթուրքական պարագլուխներից ամեն մեկն առանձին-առանձին այն խորը համոզումն ուներ, թե նախապատմությունը հենց իրեն է վստահել թուրք ազգի «վերածնության» մեծ առաքելությունը»<sup>2</sup>:

Դեռևս Խորհրդային Միության փլուզման նախօրեին պատմաբան ակադեմիկոսը, իր մեկ այլ աշխատության մեջ, անդրադառնալով ԽՍՀՄ թուրքալեզու ժողովուրդների վերաբերյալ պանթուրքիստների հայացքներին, նշում էր, որ նրանք հատուկ առանձնացնում էին այդ ժողովուրդների տնտեսական և մշակութային վիճակի հարցը՝ «մերժելով այն իրողությունը, որ խորհրդային թուրքալեզու բնակչությունը, այնուամենայնիվ, տնտեսության, գիտության, մշակույթի առանձին մարզերում հասել է կարևոր հաջողությունների: Ցարական Ռուսաստանի թուրքալեզու ծայրամասերը, որոնք խարխալում էին հետամնացության, խավարի և տգիտության մեջ, այժմ **ապագա խոստացող երկրներ են**<sup>3</sup> (ընդգծումը հեղինակներինն է): Չարմանալի է, որ վաստակաշատ պատմաբանը փաստորեն չէր բացառում, որ ձևական սուվերենություն ունեցող թուրքալեզու ինքնավար և միութենական խորհրդային հանրապետություններն ու մարզերը ապագայում կարող էին վերածվել անկախ պետականությունների: Այնուհետև Հ. Սիմոնյանը, շարունակելով իր միտքը, հանգում էր միանշանակ հետևության, որ չնայած պանթուրքիստների երազանքներին՝ «խորհրդային թուրքալեզու ժողովուրդները (և առաջին հերթին նրանց քաղաքական վերնախավը - Ա. Ս. և Ա. Ս.), բացառությամբ անդրբեջանցիների, ոգեշնչված չեն ... պանթուրքիզմով, որը, չնայած այդ տեսության պրոպագանդիստների ջանքերին, նրանց միջավայրում այսօր էլ բարենպաստ հող չի գտնում»<sup>4</sup>: Իհարկե, թուրքալեզու ժողովուրդները և մանավանդ անկախության մեջ ապրողները, հանձին Թուրքիայի, տեսնում են իրենց մեծ եղբորը, նրա հետ կապված են տնտեսական, քաղաքական և մշակութային բազմաթիվ թելերով, սակայն նրանք երբևէ կամովին չեն հրաժարվելու անկախությունից՝ մտնելով Թուրքիայի կազմի մեջ:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանը հստակ ու գիտականորեն հիմնավորված կանխատեսում է թուրքալեզու հանրապետությունների ապագայի մասին վերոնշյալ միտքը՝ ներկայացված ծավալուն մեջբերմամբ. «Անհնարին է ... միասնական թուրքական պետության ստեղծումը... Պանթուրքիզմի գաղափարախոսության և պրակտիկայի անցած ուղին ակնառու ցույց է տվել, որ այդ գաղափարը անիրագործելի է և ոչ միայն այն պատճառով, որ դրա իրականացման ճանապարհին իբրև խոչընդոտ առաջին հերթին կանգնած են Ռուսաստանը, Հայաստանը և այլ երկրներ, այլև այն պատճառով, որ նման միավորման չեն ձգտում հենց իրենք՝ թուրքալեզու ժողովուրդները (ընդգծումը հեղինակներինն է), որոնք եթե ստանան քաղաքական անկա-

<sup>1</sup> Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 243:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 283:

<sup>3</sup> Տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, էջ 547-548:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 548:

խություն, բնավ չեն ձգտի կորցնել այդ անկախութիւնը՝ այս անգամ էլ մտնելով Թուրքիայի պետական կազմի մեջ: Ինչպէս այսօր արաբական ամեն մի երկիր մեծ խանդաղատանքով դողում է իր անկախ գոյութեան վրա, այնպէս էլ ապագայում անկախ թուրքալեզու երկրները կձգտեն ամեն կերպ պահել իրենց պետական ինքնուրույն կառույցը, ինքնուրույն գոյութիւնը: Սա, ինչ խոսք, չեն կարող հաշվի չառնել Թուրքիայում, նույնիսկ այն շրջանակներում, որոնք մշտական արհեստ են դարձրել պանթուրքական միասնական պետութիւն ստեղծելու քարոզը»<sup>1</sup>:

Հետագա տասնամյակների իրադարձութիւններն ապացուցեցին Հ. Սիմոնյանի կանխատեսման իրավացիութիւնը. այսօր էլ «համաթուրքական» արժեքների վերհանումը և տարբեր ոլորտներում «միջթուրքական» համագործակցութեան լայնամասշտաբ ծավալումը նորանկախ թուրքալեզու պետութիւնների քաղաքական ու մշակութային էլիտաների կողմից մեծ մասամբ ընկալվում են որպէս գերիզուր հարևանների շրջապատում ադապտացվելու ուրուշակի մեխանիզմ, բայց «դասական» (կամ գյոքալիյան ընկալմամբ) պանթուրքիզմի քաղաքականութիւնն իրատեսորեն ու միանշանակորեն մերժվում է, քանզի ուղղակիորեն հակասում է թե՛ վերոհիշյալ պետութիւնների ինքնիշխանութեանը, թե՛ ղազախական, դրզական (կիրգիզական), ուզբեկական, թուրքմենական ազգային իրական ինքնագիտակցութեանը<sup>2</sup>:

Բացառիկ հետաքրքրութիւն են ներկայացնում ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի անդրադարձները Իսմաիլ Գասպրիհնսկուն, Ջ. Գյոքալիին, Օմեր Սեյֆեդդինին, պատմական տարբեր փուլերում թուրքականութեան գաղափարախոսութեան կենսագործման տարբեր ուղիքներին: Հ. Ավետիսյանը ռուսաստանյան «ընդարմացած» գիտական շրջանակներին ու հասարակայնութեանը հետևողականորեն ահազանգում էր թուրքականութեան «նորովի գնահատման» կամ «վերաիմաստավորման» քողի տակ վերակենդանացման նկրտումների վտանգի մասին՝ մասնավորապէս կոչ անելով չմոռանալ պանթուրքիզմի մասին, որն անցյալ դարի 90-ական թթ. սկզբին երբեմն ներկայացվում էր որպէս «համամարդկային արժեքների կրող, իրական ժողովրդավարութիւն, բոլոր թուրքական և նրանց կողքին ապրող ժողովուրդների ազատութեան, միավորման, ինտերնացիոնալիզմի, համերաշխութեան դրոշմ»<sup>3</sup>:

Ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը հայոց ազգային գաղափարախոսութեան ձևավորման աշխարհաքաղաքական գործոնների շարքում նախևառաջ կարևորել է թուրքական գործոնի լուսաբանումը՝ հանգամանորեն անդրադառնալով օսմանիզմի, պանիսլամիզմի, թուրքականութեան (գյոքալիյան ձևակերպմամբ) երեք փուլերի՝ թուրքիզմի, օղուզականութեան, թուրանականութեան հիմնահարցերին և համապատասխան մենագրութեան մեջ բազմաթիվ ծավալուն մեջբերումներ և հղումներ անելով Ջ. Գյոքալիի «Թուրքականութեան հիմունքները» աշխատութեանը<sup>4</sup>: Այնուհետև վաստակաշատ պատմաբանը համակողմանիորեն ներկա-

<sup>1</sup> Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերութիւնների պատմութիւնից, Ե., էջ 622:

<sup>2</sup> Այսօր ղազախերենը, ուզբեկերենը, դրզերենը, թուրքմեներենը ոչ միայն հարուստ գրական ավանդույթներ ունեցող, այլև թե՛ դե յուրե և թե՛ դե ֆակտո (ինքնիշխան երկրների սահմանադրութեամբ ամրագրված) պետական լեզուներ են, և նրանց բարբառ թե լեզու որակելու գյոքալիյան հարցադրումն իսկ, անշուշտ, անհեթեթ կամ վիրավորական է հնչում Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրներում: «Թուրքական աշխարհի» համար Թուրքիայում ծրագրավորված լեզվամշակութային քաղաքականութեան, աղբրեջանական պանթուրքիստների լեզվամշակութային հիմնադրութեան սնանկութեան, պանթուրքիզմի և թուրքական տարբեր ժողովուրդների ազգային ինքնագիտակցութեան, նրանց հարուստ գրական ավանդույթներ ունեցող լեզուների և ուրույն մշակութային պատմական զարգացման ակնհայտ իրողութիւնների բախման մասին մանրամասն տե՛ս Tekin Talât M., Pantürkizm Ülküsü ve Dilde Birlik «İddiası», «Türk Dili» (Aylık Dil ve Yazın Dergisi), Yıl 27, Cilt XXXVI, Sayı 310, 1 Temmuz 1977, ss. 15-18, ինչպէս նաև Սաֆարյան Ա., Քենալականների լեզվական քաղաքականութեան ակունքներում. Ջ. Գյոքալիի լեզվաբանական հայացքները, «Ժամանակակից Եվրասիա» («Թուրքիա. գաղափարախոսութեան և քաղաքականութեան հարցեր»), հ. III (2), Ե., 2014, էջ 52-76: Տե՛ս և հմնտ. նաև Ahmet B. Ercilasun, Yirmi Birinci Yüzyıla girerken Millî Kimlik Oluşturmada Dilin Önemi «Türk Dili» (Dil ve Edebiyat Dergisi), Sayı: 579, Mart 2000, ss. 206-207, Korkmaz Ramazan, Dil Bilgimiz Serüveni veya Bir Varlık Alanı Olarak Türkçe ve Atatürk, «Türk Dili» (Dil ve Edebiyat Dergisi), Sayı: 580, Nisan 2000, ss. 319-326.

<sup>3</sup> Տե՛ս «Кавказский дом, Грозный», 1992, 2 апреля, ինչպէս նաև Аветисян Г., К вопросу о «Кавказском доме» и пантюркистских устремлениях, «Этнические и региональные конфликты в Евразии», Книга 1, «Центральная Азия и Кавказ» (общ. Ред. А. Малшенко, Б. Коппитерс, Д. Тренин), Москва, 1997, с. 158.

<sup>4</sup> Սանրամասն տե՛ս Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսութիւն, Ե., 1999, էջ 50-77:

յացրել է նաև ռուսական, քրդական, ադրբեջանական, պարսկական, վրացական, կրոնական, արևմտյան, «Արևելյան հարցի» գործոնները<sup>1</sup>:

Լ. Խուրշուդյանը հորդորում էր հայ ազգային-քաղաքական միտքը «բյուրեղացնողներին» հայոց ազգային գաղափարախոսության նոր շրջանի գործընթացները, մարտավարական և ռազմավարական ծրագրերը մշակելիս չմոռանալ ռուսական (հետագայում խորհրդային) և թուրքական (իմա՝ նաև Օսմանյան) կայսրությունների «հողահավաքի» քաղաքականության և նրանց նվաճողական-ռազմավարական ծրագրերի ընդհարման սահմանագծի՝ Հայաստանով անցնելու վճռորոշ-ձակատագրական իրողության մասին. ռուս-թուրքական (նաև՝ խորհրդա-թուրքական) հարաբերություններում «մակընթացությունների ու տեղատվությունների» ու դրանց՝ հայ ժողովրդի պատմության վրա ազդեցության ոչ միանշանակ գնահատման հրամայականի ընկալմամբ հանդերձ նա հետևողականորեն կոչ էր անում հայ ժողովրդին՝ ձակատագրով կապվել «Ռուսաստանի հետ, **անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ ունի այդ երկիրը** (ընդգծումը հեղինակներինն է)»<sup>2</sup>:

Արժարժեղով հայոց ազգային գաղափարախոսության ձևավորման ու հիմնախնդիրների լուծման գործընթացում քրդական գործոնի անցյալի, ներկայի և ապագայի թեմատիկան՝ Լ. Խուրշուդյանը հնարավոր էր համարում հայ-քրդական համագործակցությունը՝ Արևմտյան Հայաստանի և Քրդստանի ազատագրական պայքարի միասնական ծրագրի մշակման ուղղությամբ և նույնիսկ հայերի, քրդերի և հույների՝ պատմության տրամաբանությամբ թելադրված համախմբումը հակաթուրքական ձակատի առանցքում<sup>3</sup>:

«Հայոց ազգային գաղափարախոսություն» մենագրության «Պարսկական գործոն» ենթագլխում էլ լուսաբանվում էր աշխարհաքաղաքական իրավիճակի թելադրանքով ժողովուրդների՝ միասնական-հակապանթուրքիստական այնպիսի ձակատի անհապաղ ձևավորման հրամայականը, որի հիմքը պետք է լինի Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքը, և որտեղ պետք է համախմբվեն Հունաստանը, Սերբիան, Բուլղարիան, Սիրիան, Իրաքը, քրդերը, ասորիները և այլք<sup>4</sup>:

Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը հիմնավորապես հերքել է թուրքական պատմագրության մեջ (մասնավորապես թուրք ճանաչված պատմաբան Հ. Ինալչըքի կողմից) հետևողականորեն շեփորվող առասպելը օսմանյան պետությանը բնորոշ բացառիկ կրոնական հանդուրժողականության մասին<sup>5</sup>, ինչպես նաև Ջ. Գյոքալփի և նրա գաղափարական հետևորդների պնդումներն այն մասին, թե թուրքերի վարած պատերազմների նպատակն իսկ տևական խաղաղության հաստատումն էր<sup>6</sup>: Նա մասնավորապես ընդգծել է. «Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր՝ նվաճումներ ջիհադի քողի ներքո: XIII-XIV դարերում օսմանյան պետությանը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջո-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78-114:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 115:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 99:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 109:

<sup>5</sup> Մասնավորապես տե՛ս İnalçık H., The Ottoman Empire: The Classical Age, 1300-1600, London and New York, 1973, p. 7. Օսմանյան պետության ծագումնաբանության առանձնահատկությունները լուսաբանող բրիտանացի օսմանագետ Փոլ Վիթեքի բնութագրմամբ օսմանյան պետությունը իր գոյության առաջին իսկ փուլում հանդես էր գալիս որպես «ղազինների պետություն (Ghazi State)՝ նախապատվություն տալով իսլամի ռազմատենչ մեկնաբանության վրա հիմնված գաղափարական միասնությունը՝ որպես պետականաստեղծ գործոնի: Տե՛ս Wittek P., The Rise of the Ottoman Empire, London, 1938; Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 103: Հիրավի, Օսմանյան բեյությունը, ինչպես և Փոքր Ասիայի արևմուտքում առաջացած այլ թյուրքական բեյությունները, ղազինական կամ ղազինների պետություն (Ghazi State) էր: Սակայն նա միակ ղազինական բեյությունն էր, որը վերաճեց կայսրության՝ պահպանելով իր էությունը: Այն դարերի ընթացքում ենթարկվեց բազմաթիվ ձևափոխումների, սակայն պահպանեց իր մոլեռանդ ու ռազմատենչ բնույթը: Տե՛ս Սաֆրաստյան Ռ. Ա., նշվ. աշխ., էջ 113:

<sup>6</sup> Մասնավորապես տե՛ս “Türkçülügün Esasları”, ss. 103-104, 117. Տե՛ս նաև Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 61-63:

ցով, իսկ պետական գաղափարախոսությունը արտաքին ու ներքին ջիհադի կոնցեպցիան էր»<sup>1</sup>:

Ամփոփելով՝ նշենք հետևյալը: Անուրանալի է հայաստանյան պատմաբանների (Ջոն Կիրակոսյան, Հրաչիկ Սիմոնյան, Լենդրուշ Խուրշուդյան, Հրանտ Ավետիսյան, Ռուբեն Սաֆրաստյան և այլք) վաստակը թյուրքականության գաղափարախոսության ու քաղաքական դրսևորումների օբյեկտիվ-համակողմանի քննության, անկախ քաղաքական կոնյուկտուրայից՝ հայագիտության և օսմանագիտության ու թյուրքագիտության հատման տիրույթի ամենասուր հիմնահարցերը ակադեմիական անաչառությամբ լուսաբանելու, գիտության ու մշակույթի ոլորտներում խորհրդային համակարգի, այնուհետև ինքնիշխան պետականության ընձեռած հնարավորությունները մեր ազգային շահերի պաշտպանության «ալգորիթմին» և «ադապտացիոն մեխանիզմին» ծառայեցնելու գործընթացում: Նրանք առաջինն էին, որ իրավացիորեն նշեցին, թե ինչպես է ադրբեջանական պատմագիտությունը զարգացնում պանթուրքիզմը թուրքիզմին հակադրելու կեղծ հակապատմական ու ծայրահեղ հետադիմական թեզը, թաքցնում այն պարզ ճշմարտությունը, որ դրանք սերտ օրգանական կապի մեջ են. մեկը բխում է մյուսից՝ դառնալով իր նախորդի շարունակությունը: Հայրենի պատմագետները մշտապես շեշտել են, որ ադրբեջանցի հետազոտողները սքողում են այն իրողությունը, որ երկու գաղափարախոսությունների հիմքում էլ ընկած էր թյուրքական աշխարհում բնակվող ազգային փոքրամասնությունների թյուրքացման կամ ֆիզիկական ոչնչացման հրամայականը, որի պրակտիկ կենսագործումը հայերի, հույների, ասորիների, եզդիների ցեղասպանության իրականացումն էր: Հայ պատմագրությունը հստակորեն բացահայտեց պանթուրքիստական մարդատյաց գաղափարախոսության օրգանական կապը եվրոպական պոզիտիվիզմի փիլիսոփայության (Օգյուստ Կոնտի ու Ֆրիդրիխ Նիցշեի հայացքների) հետ: Մեր հետազոտողները, փաստորեն, ակնառու ցույց տվեցին, որ թուրքալեզու այլ ժողովուրդներն ընդհանուր առմամբ կասկածանքով են վերաբերվում համաթուրանականության գաղափարներին և մեծ մասամբ այն պատճառով, որ դրանք հակասում են այդ ժողովուրդների ազգային ինքնագիտակցության և ինքնիշխան պետություն կերտելու ձգտումներին (ինչի հնարավորությունը հայ պատմագրությունը կանխատեսեց դեռևս 20-րդ դարի 80-ական թվականներին): Ինչպես նշել են հայրենի հետազոտողները, պանթուրքիստական գաղափարախոսությունը կյանքի կոչելու ճանապարհին Թուրքիայի համար անհաղթահարելի պատնեշ են Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը, Հայաստանը, Տաջիկիստանը և այլ երկրներ:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ այսօր՝ XXI դ. երկրորդ տասնամյակի վերջին, միասնական թյուրքական պետության ստեղծումն անհնար է, սակայն «Մեծ Թուրանի» ցնորամիտ գաղափարը շարունակում է մթագնել թուրք-ադրբեջանական տնտեսական, քաղաքական, գիտավերլուծական, հրապարակախոսական որոշակի շրջանակների՝ շովինիզմի ալիքների մեջ ընկղմված ուղեղները, և նրանք չեն դադարում երազել պանթուրանական «վաթանի» մասին՝ հույս փայփայելով, թե մի «գեղեցիկ օր» Թուրքիան կմիավորի «եղբայր» ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ: Անշուշտ, պանթուրքիզմը մեր ժամանակներում թերևս ամուլ է, սակայն ամենևին չի կորցրել իր մարդատյաց, պրոպոկացիոն էությունը: Այն այսօր էլ վտանգավոր է հայության համար և նպատակաուղղված գործիք է հակահայաստանյան քաղաքականության ճանապարհին: Եվ ինչպես քանիցս նշել են քաղաքական հայագիտության ակունքներում կանգնած մեր ուսուցիչները, պանթուրքիստական վտանգի չեզոքացման համար անհրաժեշտ է Հայաստանի, Ռուսաստանի, Հունաստանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի և այլ երկրների համախմբումը: Այս պայքարում տեղին է առավել համակողմանի դիտարկել նաև քրդական գործոնը: Մենք՝ հայերս, պետք է լինենք մշտաթուն՝ անդադար հիշելով, որ պանթուրքիզմը դեռ երկար ժամանակ սպառնալիք է մնալու Թուրքիայի հարևան երկրների և ժողովուրդների համար: Այդ երկրի ներկայիս հարձակողական արտաքին քաղաքականությունն ու մեծապետական նկրտումները դրա վառ ապացույցն են:

<sup>1</sup> Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Ե., 2009, էջ 113:

**Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ.** В настоящей работе представлены достижения армянской историографии в изучении человеканенавистнической идеологии тюркизма и пантюркизма. Армянские историки Дж. Киракосян, Г. Симонян, Г. Аветисян, Л. Хуршудян, Р. Сафрастян и др. в своих трудах подчеркивали органическую взаимосвязь между этими идеологиями, указывали преступную сущность тезиса об уничтожении иногородного населения Турции. Историки Армении особо отмечали осторожный, а в некоторых случаях и отрицательный подход многих тюркских народов и стран к пантюркизму, выявили причины такого отношения со стороны их политико-экономической элиты.

В статье подчеркивается четкая позиция исследователей относительно невозможности на современном этапе истории создания «ватана» – всеобщего и неделимого пантюранистского государства в связи с тем, что на пути пантюркизма с непреодолимым препятствием встают Россия, Китай, Армения, Иран, Таджикистан, другие государства. Тем не менее пантюркизм остается потенциальной угрозой физического существования нетюркских народов Евразийского региона.

**Ключевые слова:** тюркизм, пантюркизм, армянская историография, политическая арменистика, тюркоязычные народы, национальная идеология.

**Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS.** The article highlights the accomplishments of Armenian historiography in the study of homophobic ideology of Turkism and Pan-Turkism. Armenian historians J. Kirakosyan, H. Simonyan, H. Avetisyan, L. Khurshudyan, R. Safrastyan and others underscored the organic interrelation between these ideologies. They revealed the felonious nature of the thesis on the annihilation of the non-Turkic population of Turkey. The historians of Armenia particularly underlined the cautious, and in some cases, negative attitude of many Turkic peoples and countries towards Pan-Turkism and revealed the root-causes of such treatment on the part of their political-economic elite.

The article presents the position of the researchers on the infeasibility of creating the *vatan* - a united and indivisible Pan-Turanist state at the current stage of history, and this can be accounted for by the fact that Russia, China, Armenia, Iran, Tajikistan and other states stand as invincible obstacles on the way to Pan-Turkism. Nevertheless, this ideology remains a potential threat to the physical existence of Non-Turkic nations of the Eurasian region.

**Key words:** Turkism, Pan-Turkism (Türkçülük), Armenian historiography, political Armenian studies, Turkic nations, national ideology,.